Պարոն/ Ս. Աղինյանին

Խնդրում եմ նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող պարոն Ս. Աղինյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ս. Աղինյան

« 30 » հոկտեմբերի 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 28-ին Ալբանիայի Տիրանա քաղաքում կայացած էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի անդամ ազգային կարգավորող մարմինների նախագահների, ղեկավարների և հանձնաժողովի անդամների տարեկան նիստին մասնակցության

1. **Մասնակիցների անուն, ազգանուն՝**
   - Սերգեյ Աղինյան
   - Սեդա Շահինյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ 2024 թվականի հոկտեմբերի 28-ին Ալբանիայի Տիրանա քաղաք:

4.Հրավիրող կողմը՝ Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA):

5.Գործուղման նպատակը՝ Մասնակցել Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) 2024 թվականի հոկտեմբերի 28-ին Ալբանիայի Տիրանա քաղաքում կայացած էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային

ասոցիացիայի անդամ ազգային կարգավորող մարմինների նախագահների, ղեկավարների և հանձնաժողովի անդամների տարեկան նիստին:

6.Քննարկված թեմաները՝ Նիստի ընթացքում քննարկվել են վերականգնվող էներգիայի քաղաքականության և կարգավորման համատեքստում էլեկտրական ցանցերի սակավության վերաբերյալ ERRA-ի կողմից նախապատրաստված զեկույցի հիմնական արդյունքները, ինչպես նաև վերականգնվող էներգիայի արտադրության ծավալներին Իտալիայի, Լեհաստի և Ամերիայի Միացյալ Նահանգների Տեխաս և Միչիգան նահանգների էներգետիկական համակարգերի հարմարեցմանը առնչվող մի շարք հարցեր:

Ֆրանսիայի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչը ներկայացրել է էներգետիկական համակարգի գերբեռնվածությունը կանխելու լուծումները և ապագայում սահմանվող սակագների վերաբերյալ նկատառումները, իսկ Միջերկրածովյան էներգետիկ կարգավորողների ասոցիացիայի (MEDREG) ներկայացուցիչը խոսել է միջերկրածովյան տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծման գործում ենթակառուցվածքների դերի կարևորության մասին: Այս կապակցությամբ Հունգարիայի կարգավորող մարմնի ներկայացուցիչները ներկայացրել են էներգետիկայի բնագավառում կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության կարևորությունը, հատկապես՝ դրանց կիբեռանվտանգության նշանակությունը հիբրիդային պատերազմների մարտահրավերների համատեքստում:

Միջոցառմանը նախորդող փուլում ERRA քարտուղարությունը մասնակից ազգային կարգավորող մարմիններին էր ներկայացրել կիբեռանվտանգության վերաբերյալ հարցում, որը լրացվել էր նաև հանձնաժողովի կողմից: Մասնավորապես, նշվել էր, որ Հայաստանում դեռևս չկա կիբեռանվտանգության օրենսդրություն, սակայն այն մշակման փուլում է և նախատեսվում է, որ կհաստատվի 2025 թվականին:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման օրակարգը, ընթացքում ներկայացված բոլոր փաստաթղթերը, ներկայացումներն ու տեղեկատվությունը հասանելի է https://erranet.org/chairmen-meetings/ հղումով:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Միջոցառման արդյունքներով պայմանավորված՝ առաջարկում ենք շարունակել համագործակցությունը էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) անդամ ազգային կարգավորող մարմինների հետ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել լավագույն միջազգային փորձը, պարբերաբար իրականացնել փորձի փոխանակում և, անհրաժեշտության դեպքում, լավագույն փորձը հետագայում ներդնել Հայաստանում: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ERRA-ի անդամ ազգային կարգավորող մարմինների հետ տարիների ընթացքում ստեղծված համագործակցությունը, առաջարկում ենք շարունակել երկկողմ և բազմակողմ համագործակցության խորացմանն ուղղված աշխատանքները՝ Հայաստանի էներգետիկ ոլորտի արդյունավետ զարգացման նպատակով լավագույն փորձի ուսումնասիրության նպատակով:

Գործուղվող ..... ***Ս.Շահինյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

30.10.2024թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N
1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը
Հրաման 993-Հ, 01.10.2024թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սերգեյ Աղինյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սեդա Շահինյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Տիրանա / Ալբանիա /**

5. Գործուղման ժամկետները հոկտեմբերի **27.10.24-29.10.24թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սերգեյ Աղինյան	Սեդա Շահինյան	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) (դրամ)	13,551	13,551	27.102
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	271,012	271,012	542.024
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը	2	2	
	Ընդամենը (դրամ)	74,550	74,550	149.099
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	65	65	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	25,158	25,158	
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	75,475	75,475	150.950
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)	18,775		18.775
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		453.362	434.587	887.950

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 05.11.2024թ.